

ԱՐՁԱԳԱՆԳ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ

«ԲԱՁՄԱՎԷՊ»-ին Ա. ԴԱՐԱԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

«ՌԱԶՄԻԿ» (Ֆիդիպե, 1943)

ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ ՄԸ

Ճիշտ հարիւր տարի առաջ, 1843-ին, Ս. Ղազար վանքէն, Մխիթարեան հայրերու նախաձեռնութեամբ եւ Հ. Գաբրիէլ Այվազովսքիի ու Հ. Ղեւոնդ Ալիշանի խմբագրութեամբ, լոյս տեսաւ «Բազմավեպ»-ի առաջին թիւը:

Հարիւր տարի անընդհատ, ամէն ամիս, հրատարակուեցաւ «Բազմավեպ»ը, եւ իր խնամեալ, օգտաշատ ու ճոխ բովանդակութեամբ դարձաւ հայ գրականութեան ամենափնտրուած եւ սիրելի հանդէսներէն մին:

Հարիւր տարի անվատ եւ անխոնջ աշխատեց ան հայ մտքի անդամները, լուսաւորեց խաւար ու մշուշապատ ճամբաները, հպարտութեամբ ու փառքով լեցուց հայ սրտերը, թեւ ու թուէ՞ր տուաւ շղթայուած հայ հոգիներուն, եւ դարերու ստրկութեան մէջ խարխափող, իր անցեալի մեծութեան անդէտ հայր վերստեղծեց, անոր ցոյց տալով իր պապերու ստեղծագործութիւններն ու արժանիքները:

Քանի՞ քանի հոգիներ իրենց աչքի լոյսը թափեցին «Բազմավեպ»ի էջերուն մէջ, եւ քանին՞ իրենց մտքին ու սրտին գանձերը նուիրաբերելով, քաղցր յիշատակ մը թողած անցան ու գացին անդարձօրէն, եւ այսօր կը ննջեն յաւիտեանականութեան գիրկը: Թո՞ղ բոլո՞ր մտքի մշակներուն հոգիները Աստուած լուսաւորէ:

Բայց, հայ դժբախտ իրականութեան մէջ բացառիկ երեւոյթ մըն է որ հանդէս մը հարիւր տարի կեանք ունենայ եւ միշտ

պատենէլի վրայ մնայ: Մենք կը տեսնենք յաճախ թիթեռնիկի մը կեանք ունեցող թերթեր եւ հանդէսներ, որոնք մեծ ծրագիրներով հրապարակ կ'իջնեն, բայց թեւերնին խանձած դառն իրականութեան բոցերէն, չուտով կը կծկուին ու կը չքանան:

Ի՞նչ որ ալ ըլլայ, այս հանդէսի դարու մը կեանքը կը պարտինք Ս. Ղազարի Մխիթարեան Հայրերու անչափելի զոհողութիւններուն եւ տքնաջան աշխատանքներուն: Ափսո՞ս, որ հարիւրամեակը դուգադիպեցաւ մերօրեայ այս ահաւոր պատերազմին, եւ հնարաւորութիւն չտուաւ, փառաւոր հանդէսներով պանծացնելու դարատես «Բազմավեպ»ի, հայ մամուլի սպիտակահեր ու առաքինի ծերունիին դործն ու վաստակը:

Սակայն, ասիկա պատճառ մը չէ որ մենք դո՛նէ մեր սրտի ածուներէն քաղուած գնահատանքի, սիրոյ եւ երախտագիտութեան երփներանգ ծագկեփունջը չմատուցանենք անոր, մաղթելով որ, ինչպէս մինչեւ այսօր, յետ այսօր ալ ան չարունակէ իր բազմալստակ կեանքը, վստահ ըլլալով իր ազգօգուտ դործին, որուն հարիւրամեայ պանծացումը մեզի պարտք է եւ պիտի կատարուի պատերազմէն յետոյ, խաղաղ պայմաններու եւ թերեւս Հայաստանի մէջ:

ԽՄԲ.

«ՇԱՐԺՈՒՄ» (Պռէկնոս Այրես, 26 Ապրիլ 1947)

ԲԵՂՄՆԱՒՈՐ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

Վենետիկի Մխարանութեան պաշտօնաթերթ «Բազմավեպ»ի խմբագրապետ Հայր

Մեսրոպ Ճանաչեան, նամակաւ մը կ'իմացընէ մեզ, թէ այս տարի Սեպտեմբերին հանդիսապէս պիտի տօնուի, գրական, պատմական ու բանաստեղծական այդ ամսօրեայի Հարիւրամեակը:

Մեր ազգային մշակոյթի գլխաւոր վառարանը եղող Վենետիկի պաշտօնաթերթի բեղմնաւոր հարիւրամեակը, եզակի դէպք մըն է մեր պատմութեան մէջ, որը հարիւր տարիէ ի վեր, գրեր, պրպտեր, մշակեր ու զարգացուցեր է թէ մեր լեզուն, թէ մեր միտքը եւ թէ ազգային մեր զգացումը, դնելով հայկական հարազատ ու մաքուր դրոշմը վերադարձնող սերունդի մէջ:

Հայ ազգը շատ բան կը պարտի Մխիթարեան Մխարանութեան, որովհետեւ ան, մօտաւորապէս 250 տարիէ ի վեր հայ մշակոյթի ջանքը վեր բռնած, իրեն նպատակ դրած է միշտ դէպի լոյս ու կատարելութիւն տանիլ հայ գիրն ու գրականութիւնը, նոյն ատեն մոխիրներու տակ թաղուած մեր պատմութեան խորերէն, լոյս աշխարհ մեր պատմութեան խորերէն արժէքները, բերել մեր ազգային բոլոր արժէքները, տալով անոնց հոգի, ազգը կենդանի եւ լուսաւոր պահելու ջերմ նշանաբանով:

Մխիթարեանները ստեղծագործ հանձարներ տուած են հայ ազգին, Ալիշանի, Հայր Արսէն Ղազարեանի եւ այլոց պէս, որոնք Ս. Ղազարու այդ կղզիի խուցերուն մէջ հոգի մաշեցուցին հայ գրական տաճարը հազարաւոր երկերով հարստացնելու եւ նոյն ատեն այդ լոյսի օճախէն ազգային վառ շունչով լեցուած լուսաւոր դէմքեր արտադրելով ազգին:

Հայ գրի, գրականութեան, բանաստեղծութեան ու բանասիրութեան հետ, Վենետիկը, ինչպէս ըսինք, հայկական հարազատ շունչի ու ըմբռնումի աղբիւրը եղած է, այն մօայլ օրերուն իսկ, երբ Թուրքիոյ լուծին տակ ապրող հայ ժողովուրդին պարտադրուած էր լռել ու հայերէն չերկել:

Վենետիկը դանձարան մըն է, նոյն ա-

տեն, ուր խնամքով կը պահուին հայ ձեռագիրները եւ պատմական արժէք ներկայացնող շատ մը բաներ:

Վերապրող սերունդը երախտագիտութիւն եւ համակրանք ունի հայկական այդ մեծ հաստատութեան հանդէպ եւ վստահ ենք, թէ «Բազմավեպ»ի հարիւրամեակին առթիւ, ան պիտի տայ իր սիրոյ տուրքը, տարածելով զայն ու բաժանորդագրուելով անոր:

ԱՆՄԵՐ

«ՄԱՍԻՍ» (Պէյրոզք, 27 Օգոստոս 1947)

ՓԱՌԱՏՕՆ «ԲԱՁՄԱՎԷՊ»-Ի

«Բազմավեպ»ի հարիւրամեակին առթիւ չքեղ հանդէսներ տեղի պիտի ունենան, այս տարի, Հոկտեմբեր 18ին եւ 19ին:

Այդ առթիւ գաղթաշխարհի զանազան մասերէն Վենետիկ կը հասնին հայ մամուլի ներկայացուցիչներ:

Փառաւորել «Բազմավեպ»ը՝ կը նշանակէ փառաւորել հայ միտքը, հայ սիրտը, հայ հոգին: «Բազմավեպ»ի ուղղուած ամէն դրուատիք, ուղղում՝ է հայ մեծաաքանջ լեզուն, որ շնորհիւ այս հանդիսարանին՝ մեծապայծառ կերպով բացայայտեց ինքզինք, օտար երկնքի տակ, կեանք տուաւ անցեալին, լուսաւորեց ներկան, ու դէպի ապագան ահա՛ կը յառէ իր աչքերը:

Փա՛ռք հայ մամուլի նահապետին, որ աշխարհի սակաւաթիւ հարիւրամեայ բարձր խօսքի բեմերէն մին է, եւ միակը մե՛ր իրականութեան մէջ:

Դէպի՞ Վենետիկ: Որպէսզի ձեր աչքը, եւ մանաւանդ ձեր հոգին ապրի անապական անջնջելի պահեր, հարստանա՛յ քաղցր յուշերով:

Անդուգական քաղաքի մը մէջ, Մխիթարի տունը, կղզեակի մը վրայ, պիտի վառի այդ օրերուն՝ հազար աստղերով:

Նի՞ս պիտի երթաս, փոխէ՛ ճամբադ: Նիւ-Եո՞րք պիտի ժամանես, չը՞լէ՛ ծրա-

գիրդ: Գնա՛ Վենետիկ, մասնակցէ՛ այդ փառատօնին, եւ Միխիթարի դամբանին առջեւ աղօթէ՛ աղբիւր համար:

Հայ մամուլի, հայ մտքի այն մարմինները՝ որոնք չեն կրնար ներկայացուցիչ լինել՝ պարտին հեռագրով յայտնել իրենց շնորհաւորութիւնները, գնա հաստանքը, հիացումը:

Աշխարհի ոեւէ մէկ հեռավոր կէտին վերայ գտնուող հայր թող հասցնէ իր ձայնը՝ Ս. Ղազար: Մեծ ոստաններէն եւ անապատներէն, լեռներու կատարէն եւ ծովեզերքներէն, լսելի թող ըլլան յաղթերգներ:

Որովհետեւ յաղթանակ մ'է «Բաղմաւէպ»ի հարիւրամեակը:

Թող ապշահարի մարդկութիւնը ի տես փոքր աղբի մը մտաւորական այդ յաղթանակին:

«Ծագէ՛ հայ համնար, փայլէ՛ բիւր բոցեր, Իմանա՛ ազգեր՝ քէ հայք չեն անցեր»:

ԿՈՐԻԻՆ

«ՄԱՐՄԱՐԱ» (Կ. Պոլիս, 19 Հոկտ. 1947)

ՈՒՂԵՐԶ

Դուք որ կը տօնէք այսօր դարաւոր հանդէսի մը հարիւրամեակը եւ «Բաղմաւէպ»ի ջահը կը բարձրացնէք Վենետիկի փերուն վերեւ, լսեցէք ձայնը մեր համակրանքին ու հաւատացէք մեր հեռավոր հոգիներուն:

Ուրբան հօր է հայ մշակոյթը մանաւանդ այդ կապոյտ կղզիին մէջ, ուր հաւաքուել էք այսօր ձեր յաղթանակը աւելի լաւ վայելելու համար:

Հերոսութիւն մըն է կռուիլ կեանքին դէմ եւ արհամարհել ճակատադրին բոլոր դաւերը, բայց խկական դիւցադնութիւն է հայ ծնիլ եւ մտքի ճամբով մղել դոյութեան ամէնօրեայ պայքարը: Քիչեր յաջողած են յառաջանալ այդ ճամբէն եւ հասնիլ կատարին, մոռնալ տառապանքները եւ ճակատաբաց ներկայանալ պատմութեան:

Աւանդութիւնը պսակած է միշտ մեր մը-

շակոյթի ուխտաւորները եւ զանոնք արժանի դասած վաղուան պանթէոնին: Անոնք որ իրենց իմացականութիւնը նուիրած են այս պանծալի դատին, զիտցած են միշտ թէ կ'աշխատին ասպարային համար եւ ինչ որ տուած են դարերուն իբր արժէք եւ ստեղծաւորութիւն՝ կը պատկանի սերունդին որ ծնած է տակաւին:

Ան է որ պիտի խօսի յանուն պատմութեան, եւ արձակէ դերադոյն վճիռը: Ո՛վ որ պայծառ խղճմտանքով կատարած է իր պարտքը, կրնայ հանդարտօրէն սպասել այդ պատգամին:

Եւ դուք երջանիկ էք այսօր, քանի որ աւանդութեան կը յանձնէք մշակոյթի դանձարան մը, ուր տեղ ունին մեր մատենադրութիւնն ու բանահիւսութիւնը, սրբազան դպրութիւնը, լեզուն եւ քաղաքակրթական նուաճումները: Դարու մը հարըստութիւնը, հանդէսի հաւաքածոյին մէջ ամփոփուած:

Վա՛յ այն ժողովուրդներուն, որ պարտուած են իմացական կռիւներու մէջ: Անոնք չեն կրնար վերապրիլ ուրիշ աղբերու նման, քանի որ կորսնցուցած են իրենց բարոյական մեծագոյն խիղախութիւնը եւ ստիպուած են գլխիկոր քալել:

Դուք մէկն էք անոնցմէ, որ խնայած են մեր ժողովուրդին այս ահաւոր պարտութիւնը եւ դայն տարած երջանկութեան մը, որ սերունդէ սերունդ կը փոխանցուի անվրթար:

Կը խորհինք թէ «Բաղմաւէպ»ի սեղանը կը ցնծայ հիմա այս խանդավառութեամբ, եւ կոչնականներ բաժակ կը պարպեն նոր շրջաններու եւ աւելի հարուստ երկունքներու ի պատիւ:

Առատութեամբ, ուրախութեամբ եւ պողպարեութիւնով յորդի՛ այդ սեղանը, որպէսզի աւելի լաւ բաշխէ հայ մտքին մասունքները եւ ամէն ոք յազենայ մանանայէն:

Կեանքի մէջ այս պահերն են որ անմահ են միայն:

ԽՄԲ.

«ՄԱՐՄԱՐԱ» (Կ. Պոլիս, 19 Հոկտ. 1947)

ԻՆՉՊԷՍ ՀԻՄՆՈՒԵՅԱԻ «ԲԱՉՄԱՎԷՊ»

Աւելի քան հարիւր տարի անցած է այն օրէն ի վեր, երբ Ս. Ղազարու մենաստանին մէջ կը սկսէր շողարձակել հայ մշակոյթին համեստ փարոսներէն մէկը:

Ամբողջ դար մը եւ աւելի, անմար մընաց մշակոյթի այդ կանթեղը, զոր մենաստանի մը մէջ վառեցին սուրբ ձեռքեր՝ լոյս եւ ջերմութիւն տարածելու համար ամէն կողմ:

Աշխարհի չորս ծագերէն հայ մշակոյթի ներկայացուցիչները համախմբուած են այսօր Ս. Ղազարու Վանքը՝ պանծացնելու համար հարիւրամեայ «Բաղմաւէպ»ը:

Իրականին մէջ, «Բաղմաւէպ»ի առաջին թիւը լոյս տեսած է 1843 Յունուար 1ին, բայց պատերազմին հետեւանքով այս տարուան յետաձգուեցաւ հարիւրամեակի տօնակատարութիւնը:

Հարիւր տարուան հատորները կը վերկայեն թէ «Բաղմաւէպ» տառացիօրէն յաջողած է իրականացնել իր խոստումները:

Հեռու մասնագիտական բնոյթէ, «Բաղմաւէպ» իսկապէս եղած է բաղմակողմանի մամուլ: Երբեք մտքի, արուեստի, գիտութեան, բանասիրութեան եւ պատմութեան:

Մէկ խօսքով արեւմտեան քաղաքակրթութեան նուաճումներուն զուգահեռաբար «Բաղմաւէպ» տոհմիկ մշակոյթին անթիւ անհամար կոյս դաշտերը մշակած է բժախնդի ձեռնհասութեամբ՝ իբրեւ պարծանքի կոթողներէն մէկը հայ ժողովուրդին:

. Հարիւրամեակի տօնակատարութիւնները եթէ մէկ կողմէ՝ յարգանքի տուրքը պիտի հատուցանեն հանդէպ անհետացող մտքի մշակներուն, միւս կողմէ՝ սրբանուէր Ուխտի մը նուիրական կեդրոնը պիտի համախմբեն ապրող մտաւորականութեան ներկայացուցիչները՝ ստեղծե-

լով մտաւորական եւ հոգեկան հաղորդութիւն մը, որ կոչուած է անմար պահել մշակոյթի դարաւոր ջահը:

Բոլոր անոնք որ կը մասնակցին այսօրուան պանծացումին, իրենց հետ պիտի տանին լոյսի շող մը՝ Ս. Ղազարու փարոսէն:

Յանուն իր գրասէր ընթերցողներուն «Մարմարա» կը շնորհաւորէ «Բաղմաւէպ»ի հարիւրամեակը, իր մասնակցութեան դոյզն բաժինը բերելով դարադարձի պատուարեր փառատօնին եւ Հայր Արսէն Բաղրատունիի անմահ քառեակը ձօնելով օրուան յորելեարին:

«
Ահա քեզ աշակերտիլ
ես յօժարիմ յառաջագոյն՝
Հետեւեալ սիրողապէս
քոյդ ընթացից նախաշաւիղ . . .
Քաղցրալուր քնար քոյին
գրաւեաց զոգի իմ մտադիւր .
Ըզմայլեալ կամ աւասիկ
ի նուագ բանիցդ դեղդեղաձայն . . .
Փրոֆ. Ա. ՆԱՐԿԻՋԵԱՆ

«ՅԱՌԱՋ» (Փարիզ, 19 Հոկտ. 1947)

ՈՂՋՈՅՆ «ԲԱՉՄԱՎԷՊ»ԻՆ

Վենետիկի Միաբանութիւնը մեծ շուքով կը տօնէ այսօր «Բաղմաւէպ»ի հրատարակութեան հարիւրամեակը:

Հանդիսութեանց ներկայ պիտի ըլլան Սփիւռքի հայ մշակոյթին վաստակաւոր ու երիտասարդ դէմքերը — կամ առնուազն այն բախտաւորները որոնք կրցած են հարթել անցադրային դժուարութիւնները:

Վենետիկը միայն կրօնական համայնքի մը սրբավայրը չէ անշուշտ, այլ տեսակ մը հայկական կաճառ՝ արժանի մեր անվերապահ դուրգուրանքին եւ քաջալերութեան:

Կարելի է տալ մեր գրականութեան պատմութիւնը, առանց յիշելու այն հրապաշխանները զոր Միխիթարեան հայ-

ընդ կատարեցին մասնաւորաբար վերջին հարիւրամեակին:

Արեւմտահայ թէ արեւելահայ գրական-նութեան զարթոնքը հաւանաբար շատ բան կորսնցնէր իր լրութեանէն եթէ չունենայինք վեհապետի: Եւ վեհապետն ընկալանաբար:

Աղբիւրականի մանրանկար կղզիին մենաստանին մէջ էր որ Մխիթարեան հայրերը, քրտնաջան աշխատանքով, « ի լոյս աշխարհ » բերին՝ դարերու ընթացքին, աստիճանաբար, մոռացութեան մատնուած մեր ոսկեղինիկ լեզուն:

Քաղաքական աւելի դժնդակ պայմաններու մէջ ապրող մեր գրական մշակները՝ Պոլսէն մինչեւ Թիֆլիզ, թերեւս չունեցան միեւնոյն հնարաւորութիւնները:

Ինչ ճիշդ որ կատարուեցաւ վեհապետի վանքին չընթացողն ուրախ, մնաց կիսատ: Մխիթարեաններն էին որ կրցան գերազանցապէս հիմնական ու տեւական աշխատանք թափել՝ փրկելու համար մեր Ոսկեղարու մատենադրութեան գոհարները:

Ո՞վ պիտի ունենար այս վանականներուն ժամանակը, համբերութիւնը եւ գրաբարի սէրն ու հմտութիւնը՝ թարգմանելու համար դասական եւ ժամանակակից օտար գրականութեանց գլուխ-գործոցները:

Միայն գրաբարի վերածնունդը կամ մեր «մեծաբան»-ին գիտական ուսումնասիրութիւնը:

Հա՞պա իրենց հետաքրքրութիւնը աշխարհաբարի հանդէպ:

Կարելի է, անշուշտ, վիճել իրենց հեղինակութեանց կամ մշակած լեզուին գեղարուեստական արժէքին մասին:

Բայց ո՞չ մէկ բարեմիտ քննադատութիւն կրնայ ստուեր ձգել այն բեղուն գործունէութեան վրայ զոր վեհապետը ունեցաւ՝ մասնաւորաբար Բագրատունիներու, Հիւրմիւզներու, Ալիշաններու, կենսատու չունչին տակ:

Սուրբ Ղազարի մենաստանը եղաւ ջահ

մը, երէկ, մեր ուղեկորոյս մտաւորականութեան համար:

Կրնայ տակաւին շատ երկար տարիներ վառ պահել ան իր ճրագը եթէ ազգին երեւելիները հետաքրքրուին իր ապագայով, իր պարբերաթերթերով ու մանաւանդ իր գաղտնիքներով:

Մենք չէինք որ պիտի ուրանայինք Հայաստանի արուեստի եւ գրականութեան վերելքը:

Բայց պիտի ուղէինք որ Երեւանն ալ, իր կարգին, ցոյց տար, մեր հրաշափառ լեզուն հանդէպ, այն նախանձախնդրութիւնը զոր վեհապետը ունի, եւ պահէ անոր տոհմիկ նկարագիրը:

Սփիւռքի գրականութեան նորահաս սերունդին համար ալ վեհապետը կրնայ ըլլալ ներշնչութիւն աղբիւր: Որպէսզի կարգայ մեր դասական մատենադրութիւնը եւ սորվի ու զարգացնէ մեր լեզուն, փոխանակ ամուլ վէճերով ժամաւաճառ ըլլալու:

Առանց անդուլ աշխատանքի, առանց նշխիրումի, դժուար թէ վեհապետի վանականները ի կատար ածէին իրենց ստանձնած դերը:

Կէս ճամբան մնացած պիտի ըլլայինք իբրեւ ազգ եթէ չունենայինք մեր մշակոյթը:

Այդ մարդին մէջ վեհապետի եւ մնացեալներուն կատարած աշխատանքը արժանի է ամէն գնահատութեան: Սրտագին ողջո՞յն իրենց:

Ժ.

« ՅԱՌԱՋ » (Փարիզ, 19 Հոկտ. 1947)

ՄԵԾՆ ՄԻԻԹԱՐԻ ԿՂԶԻՆ

(ԱՅԼԱՐԱՆՈՒԹԻՒՆ)

Յոգնած, պարտաւոր, ջղաքամ՝ նրատաւ աւազին վրայ, մորթի դոյն:

Խաղաղ էր ծովը:

Հրեշտակները իջնէին ծովուն վրայ եւ նստէին՝ կ'առեղնադորձէին: Արեւը ապրը-

չում կ'երկարէր իրենց ու նարօտ: Ու կը լսուէր Ծնորհալիին ձայնը, ամպերուն ետեւէն:

Մեծն Մխիթար, հալածանքին վախը տակաւին հոգւոյն մէջ, չէր կրնար սակայն հաղորդուիլ խաղաղութեամբ: Սրտին բարասումը, ահագնազի մը պէս միշտ տաղ-նապալի, անդոհանքով կը լեցնէր հոգին: Բայց յոգնած էր, շատ էր յոգնած:

Գլուխը դրաւ մախաղին վրայ, աչքերը յառեց ծովուն:

Ալիքները վարդի թերթերու մեծութիւնն ունէին: Հորիզոնը՝ մեղրի դոյն: Ծնորհալի կ'երգէր, — Կիլիկիոյ լեռներուն վրայ՝ արթնութեան կը կանչէր Հայոց զօրքը, պահապան հայ լեզուին, պահապան հայ մշակոյթին:

Բարբարոսներուն խորշակէն պահպանելու համար չէ՞ր միթէ, որ ինքն ալ, Մեծն Մխիթար, մախաղին մէջն էր լեցուցեր հայկական մաղաղաթները եւ վազեր դէպի արեւմուտք: Որպէսզի յաւիտեան համարի Հայկազեան Ձայնը, մեր բարբառն աստուածաբնար:

Մեր լեզուն:

Տաճարաձեւ, — արմատը Նայիրեան աշխարհի ապագութեան մէջ, դմբէթը Աստուծոյ օթեւանին խորոփիքին մէջ:

Լեռնաձեւ, — ամպերուն շանթերն արհամարհելու համար, ահագնազորդ ջրը՝ վէժներ կաղմելու համար:

Հայերէն լեզուն, Արաքսի պէս ըմբոստ՝ որ կը հոսի, որ կը սուրայ, ինչպէս երկրորդ մը՝ առանց կամուրջներու օգնութեան եւ առանց ասպատակողներու թամբին:

Խոնջէնքը, աւելի ծանր, յաղթեց հալածանքի վախին, ու Մեծն Մխիթար քնացաւ, թէ եւ սրտիկը դող: Ու երազ տեսաւ: Նորէն ծով էր եկեր, — փրկութեան միակ ճամբան:

Խելօք ծով մը, երեսը ձուկի թեփի պէս: Ամպի մը ճեղքէն լոյսի ջրվէժ մը հեռուն: Խոփոռ բան մը կար, սակայն, միջոցը-

տին մէջ: Եւ ամպերը կ'աշխատէին ծածկել տաղնապի մը պատրաստութեան նշանները:

Մեծն Մխիթար կը նայէր ծովուն, վախով եւ անձկութեամբ, հայերէն ձեռագիրներու մախաղը սրտին սեղմած:

Յանկարծ փուշերու պէս փոթիթեցաւ ծովը, ուղտափուշի եւ դժնիկի դաշտ դարձաւ, յետոյ ալիքները բարձրացան, յառաջ արշաւեցին, պաշարեցին դինք: Ահա Մեծն Մխիթար ծովուն մէջ, մերթ ջրասոյգ, մերթ ալեծուփ: Տեսնողը պիտի վկայէր, որ այլեւս պիտի կորսուի ծովամոյն:

Մեծն Մխիթար աղօթեց.

— Տէ՛ր, դէթ այս մախաղը փրկէ՛ր, դուն որ քու ճառագայթէդ շամանդաղ մը դրիր ցեղիս այս ստեղծագործութիւններուն մէջ՝ մի՛ թողուր որ կորսուի ջրամոյն:

Եւ յանկարծ լոյսի շղթա մը ճեղքեց ամպերը, սաստեց ալիքները՝ որոնց վրայ կը հանդէպ մախաղը: Մեծն Մխիթար ապշու-թեամբ դիտեց որ մախաղը դարձաւ նախ լաստ մը, որ ծփաց պահ մը, ինքն ալ լաստին վրայ: Յետոյ դարձաւ կղզի:

... Արթնցաւ:

Ծովը կը ծփար իր ոտքերուն առջեւ՝ ծաղկած նշանի պարտէզի մը պէս: Հեռուն, այն կղզին, որու վրայ ապաստանած էր երազ ալիքներու ժիւղոյն: Աղօթող արեղայի մը պէս, ծնրադիր այլ ձեռքերը երկինք երկարած, ցամաքի այդ բեկորը կը փառարանէր կարծես Աստուծոյ, որ յաւիտենականութիւն էր տուել Մխիթարի լեզուն:

Այդ կղզին տաճար մըն է, կ'ըսէիր, ծովուն վրայ, հիմերը ջուրերու թաղաւորութեան մէջ, ու դմբէթը ամպերու թաղաւորութեան մէջ:

Այդ կղզին սկիհ մըն է թերեւս, զոր Աստուծոյ լեցուցած է ամբրոսիայով, աշխարհին հաղորդելու համար բանաստեղծութեամբ եւ երաժշտութեամբ թրթռուն

Ժողովուրդի մը արբելանքին խորհուրդը:
Յամաքի այդ կտորը կը կոչուի Մեծն
Մխիթարի կղզի:

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

«ՀԱՅՐԵՆԻՔ» (Պոստոն, 22 Հոկտ. 1947)

«ԲԱԶՄԱՎԻՊ»-Ի ՀԱՐԻՐԱՄԵՆԱԿԸ

Եթէ ճիշտ են մեր ստացած վերջին լուրերը, ուրեմն, ամսոյս 19-20ին, Վենետիկի մէջ տեղի ունեցած են հարիւրամեակի մեծաշուք հանդէսներ՝ նուիրուած աւելի քան մէկ դարու կեանք ունեցող պարբերաթերթ «Բազմավիպ»ին: Ըստ նախօրօք կազմուած ծրագրի, այս հանդէսները տեղի պիտի ունենային 1943ի ամբան, հարիւրամեակի լրացման ճիշտ տարին, բայց պատերազմի տակնուվրայութիւններ թոյլ չըտուին այդ եւ միայն վերջերս տեղի կ'ունենան յօրեկնական հանդիսութիւնները: Երկու օր առաջ «Հայրենիք»ի խմբագրութիւնը հեռագրով մը չորհաւորեց «Բազմավիպ»ը, երկար կեանք ու նոր նուաճումներ մագլթելով հայ պարբերաթերթերու այդ մեծ նահապետին:

Մխիթարեան Միաբանութեան երախտագիտութեան արժանի մեծագործութիւններէն մէկն է «Բազմավիպ»ը: Ան հիմնուած է Վենետիկի մէջ 1843 թուին: Երկար տարիներ ան հրատարակուած է իբր երկշաբաթաթերթ, ապա վերածուած է ամսաթերթի, իսկ այնուհետեւ շատ տարիներ լոյս տեսած է երեք կամ երկու ամիսը մէկ անգամ: «Բազմավիպ»ի թիւերը, որոնք այսօր պատկանելի հատորներ կը կազմեն, կրնան լեցնել ամբողջական դրաղարաններ: Եւ ի՞նչ արժէքաւոր նիւթեր տուած է «Բազմավիպ»ը իր աւելի քան մէկ դարու երկարատեւ կեանքի ընթացքին:

Իր մշակած նիւթերով, սկիզբը «Բազմավիպ» ջանացած է ժողովրդական դանդաղ

ուսմանը մատչելի հրատարակութիւն մը դառնալ: Ան հրատարակած է յօդուածներ, որոնք կրնային լոյս տեսնել ուրիշ թերթի մէջ ալ: Անոր սկզբնական շրջանի հատորները եթէ այսօր աչքէ անցնենք, ապահովաբար պիտի գտնենք անոնց մէջ շատ գրութիւններ, որոնք մասամբ կամ ամբողջութեամբ այլեւս կորսնցուցած են իրենց արժէքը: Բայց անոնք այդ օրերուն արժէքաւոր գրութիւններ էին, անոնք տքնաջան արդիւնք էին ժամանակի հայ մտաւորականութեան մեծ մասի ճիշդերուն եւ իր ատենին անոնք հաճոյքով ու հետաքրքրութեամբ կարդացուած են եւ կատարած՝ իրենց փրկարար դերը:

Ինչպէս շատ մը հրատարակութիւններ, «Բազմավիպ» եւս ժամանակի ընթացքին աւելի բարեխառնուած է եւ հետզհետէ դարձած՝ լուրջ ու ծանրախոհ թերթ մը՝ բանասիրական, գրական, գիտական, բարոյական բովանդակութեամբ: Լեզուն ծանր, դրաբարի ազդեցութեան տակ, բայց հետզհետէ կոկուած ու յղկուած է ան: Լեզուական տեսակէտէ, մանաւանդ վերջին տարիներուն, «Բազմավիպ»ը դրեթէ եղած է այն, ինչ որ եղած են մեր բազմաթիւ արժէքաւոր հրատարակութիւնները: Մխիթարեան Հայրերը դրած են աշխարհաբար, ժողովուրդի լեզուով, բայց անոնք կարծես դրած են ակամայ. հնութեան կամ գրաբարի չունին է որ միշտ տիրական եղած է անոնց բոլոր գրութեանց մէջ: Աշխարհաբարի յաղթանակով սակայն, հետզհետէ անոնք ալ մօտեցած են երբեմն իրենց չափած աշխարհաբարին եւ, եւ վերջ վերջը իրենցը ըրած են դայն:

Բայց «Բազմավիպ» միայն հայերէն լեզուով յօդուածներ չէ որ տուած է մեզի, այլ եւ հրատարակած Փրանսերէն, իտալերէն, յունարէն լեզուով յօդուածներ: Եւ այդ կերպով բազմաթիւ եւրոպացի գիտնականներ ծանօթացած են հայ ժողովուրդ

դին, անոր պատմութեան, անոր մտաւոր տքնութիւններու արդիւնքին: Շատ գիտնականներ եթէ կապուեցան մեր ժողովուրդին, սիրեցին դայն եւ նուիրուեցան հայագիտութեան, այդ մենք կը պարտինք «Բազմավիպ»ի եւ «Հանդէս Ամսօրեայ»ի նման հրատարակութեանց: Եւ շատ արժէքաւոր գրութիւններ, որոնք լոյս տեսած են այս հանդէսներուն մէջ, ի վերջոյ լոյս տեսան նաեւ առանձին հատորներով:

«Բազմավիպ»ի հարիւրամեակը առիթ մըն է, որ մենք անգամ մը եւս յիշենք եւ մեր երախտագիտութեան տուրքը տանք Մխիթարեան Հայրերուն, Վենետիկի թէ Վիեննայի, որոնք վերջին մօտ երկու եւ կէս դարու ընթացքին հանդիսացան ճշմարիտ առաքեալները հայ մտքի վերածնութեան: Այն օրերուն, երբ խաւարը կը տիրէր մեր հայրենիքին մէջ, երբ տգէտ ու բարբարոս ըէժիմի մը խեղդիչ կապանքները թոյլ չէին տար չնչելու հայ մտքին, այդ օրերուն՝ միայն մէկ մարդ, Սեբաստացի Մխիթարը, յաղթահարելով բազմապիսի դժուարութիւններ ու արգելքներ, պիտի մօտիկը, հիմնեց Ս. Ղազարի վանքը, որ քիչ յետոյ պիտի դառնար Հայ Մշակոյթի ամենէն մեծ ու չողարձակ վառարանը:

Երբ Մեծ Մխիթարը հիմը կը դնէր իր մեծ ու յաւիտենական դործին, այդ օրերուն, աշխարհի բոլոր մասերուն մէջ, կային ցիրուցան գաղթական մեծ զանգուածներ, բայց չկային հայ մշակոյթի կեդրոններ, չկային ոչ երկրի մէջ, ոչ ալ երկրէն դուրս: Էջմիածինն ու Երուսաղէմն իսկ արժէք մը չէին ներկայացներ. անոնք ոչ այդ օրերուն եւ ոչ ալ այնուհետեւ իրենց դործի քանակով ու որակով չեղան երբեք այն, ինչ որ եղաւ մէկ հատիկ Ս. Ղազարի վանք մը իր առաջին հարիւրամեակի ըն-

թացքին եւ այնուհետեւ: Թողունք օտարները, հայ մտքի շքեղութիւններուն մենք իսկ պիտի մնայինք բոլորովին անծանօթ եթէ չունենայինք Մխիթարեանները: Եւ այս վերջինները ոչ միայն հետզհետէ մեզ հաղորդակից դարձուցին ինչ որ մերն էր, այլ եւ անոնք մեր առջեւ փռեցին արեւմտեան մտքի ու քաղաքակրթութեան յաւերժական արժէքները: Միայն մէկ «Հայկական Բառարան» բաւական էր որ մենք յաւիտենօրէն մնայինք երախտագարտ Մխիթարեան մեծ Հայրերուն: Եւ քանի՜ քանի՜ նման գործեր, գորս մենք կը պարտինք Մխիթարին ու անոր անմահ յաջորդներուն:

Սակայն, «Բազմավիպ»ը կամ ընդհանրապէս Մխիթարեանները մեր սրտին պիտի չխօսէին այնքան, եթէ անոնց ամբողջ գործը ըլլար գրքերու գէղ մը, թերթեր ու զանազան հրատարակութիւններ միայն: Մխիթարեաններ ու «Բազմավիպ»ը չեն դրաղած միայն չոր գիտութեամբ ու բանասիրութեամբ, անոնք նաեւ ձգտած են մեզ կրթել ու դաստիարակել իբր հայեր: Եւ ա՛յն է որ մեր սրտերը կը լեցնէ անհուն սիրով: Ալիշան, Չամչեան, Բաղրատունի եւ ուրիշներ՝ Հայաստանէն ու հայ ժողովուրդէն հեռու, մոլեգին սիրով մը երգեր ու տարփողեր են մեր Հայաստանն ու անոր ժողովուրդը եւ մեր մէջ ալ վառեր են ազատութեան կայծերը: Եւ ի՞նչպիսի մեքենա մը պատրաստեր են անոնք: Շատ շատերէն յիշենք միայն Պէշիկթաշեանը, Արփիարեանը, Թովմաս Թէրզեանը, Աճէմեանը, Վարուժանը: Ասոնք եւ դեռ շատ ուրիշներ Մխիթարեաններու հոգիէն բուռ բուռ կայծեր են առեր եւ զանոնք թափեր՝ մեր հոգիներուն մէջ: Շատ տարիներ առաջ «Բազմավիպ»ի շունչը գրաւեր է նոյն իսկ մեր մեծանուն Պրիմեանը, Վասպուրականի Արծիւը, եւ ան, հրատարակութեան համար անոր է ուղարկել իր մտքի առաջին ծաղիկները:

Շնորհաւորելով «Բազմավիպ»ի հարիւր-

ամեակը, «Հայրենիք» իր ձայնը կը միացնէ անոնց, որոնք նոր յաջողութիւններ կը ցանկան հայ պարբերականներու ամենէն երէցին ու վաստակաւորին: Հայ կեանքըն այսօր հիմնովին փոխուեր է. հայութեան մտաւորական կեդրոնը այսօր փոխադրուեր է Արարատեան Դաշտը, բայց մենք պիտի ուզէինք որ Արեւմուտքի մէջ ալ երկար ապրէին հայկական Վենետիկն ու Վիեննան եւ շարունակէին իրենց լոյսը արձակել մեզի իրենց «Բազմավէպ»երով եւ այլ հրատարակութիւններով:

ԽՄԲ.

«ԱՐԵՎԻԿԱ» (Փարիզ, 26 Հոկտ. 1947)

ՈՂՋՈՅՆ «ԲԱԶՄԱՎԷՊ»-ԻՆ

Գաղթաշխարհի Հայ գրի կոթողներէն «Բազմավէպ» վերջացող շարքուն իր հարիւրամեակը տօնեց իր ա'լ Հայուն համար ուխտատեղի դարձած՝ Վենետիկի Ս. Ղազար կղզիին մէջ: Վստահ ենք որ պատասխանելով եղած հրաւերին շատ մը մըտաւորական եւ ազգային դէմքեր անձամբ ներկայ եղան հայ մամուլի այս պատմական կոչումներն եւ բնականաբար ա'լ աւելի ուխտաւորներ պիտի փափաքէին հոն երթալ՝ եթէ անցադրային եւ ճամբորդական դժուարութիւններ արգելք չըլլային:

Մխիթար Աբրահամ անունը մեր ցեղի անունին հետ պիտի յիշուի՝ մանաւանդ «Բազմավէպ»ով. կրնայ ըլլալ որ չենք փիլիսոփայական անհետանալ բնութեան առեղծուածային խաղերով՝ բայց «Բազմավէպ» անմահ պիտի մնայ իր մէկ դարու հրատարակութեամբ, Մեսրոպեան տառի տարածումի աշխատանքով եւ հայ ցեղի մարդկային արժէքներու փնտռութիւնի եւ ծանօթացման ճիգերով:

«Բազմավէպ» եղաւ ներշնչումի աղբիւրը Մխիթարեան ուխտի այն փառանքին, որ

հայրենիքէ հեռու՝ բարեկամ երկրի մը հիւրընկալ մէկ կղզեակին վրայ հաստատեց Մտքի եւ Հոգիի Հայրենիք մը, որուն դահլիճներն իրենց կեանքերը՝ անձառելի նուիրումով՝ բոլոր այն Հայ ցեղով եւ գրով խանդավառ տղաքն, որոնք հայաշխարհի չորս ծագերէն հոն դացին եւ ուրանալով աշխարհն իր սովորական խնդիրներով՝ զինուորագրուեցան մարտնչելու ցեղային մոռացումի, աշխատութեան եւ կորուստի սեւ թշնամիներուն դէմ:

Եւ ահա հարիւրամեայ մարտի մը ընթացքին՝ Մխիթարեան Ուխտը, պահ մը արդար հպարտանքով Հայ Մտքին կը ներկայացնէ իր հարիւրամեայ տեղեկագիրը՝ յայտարարելով միանգամայն թէ պիտի շարունակէ այս լուին հերոսական գրոհը, վասնզի Մտքի համար մղուած կռիւները անընդմիջելի եւ յաւիտենական են:

Եթէ ուզէինք յիշատակել անունները մեր այս Սփիւռքի Հայ Գրատան սպասարկուներուն՝ հարկ էր սրնակներ լեցնել եւ արդեօք կարելի պիտի ըլլա՞ր յիշել անունները այն բարի եւ նուիրեալ եկեղեցականներուն որոնք եթէ չգրեցին՝ բայց եւ իրենց հայութեան շնորհով դար մը անդադրում պահեցին այս չքեղ Հայ Մամուլը:

«Արեւմուտք» առանց յականջ անուանէ յիշելու բոլոր անոնք որոնք գրեցին, տըպեցին եւ ցրուեցին «Բազմավէպ»ը, իր հայութեան ցեղի անմահ դաւաններէն Մխիթար Աբրահամ, որուն օրհնեալ շունչը ծաղկեցուց ամայի կղզիին Ս. Ղազարու, որպէսզի հալածական Հայ Մամուլը ապահով դետնի վրայ ուռճանայ, հայ ցեղին անցեալ փառքըն ու պատմութիւնը աշխարհին ու հայ ժողովուրդին ճանչցնելու ի խնդիր:

Յարգենք յիշատակը «Բազմավէպ»ի հերոսներուն, եւ «Արեւմուտք» իր եղբայրական ողջոյններն ու խնդակցութիւնները կը յայտնէ այս էջէն իր երէց եղբօր՝ «Բազմ-

մավէպ»ին, իր աննկուն աշխատանքներուն:

Հայ ցեղի յաւիտենականութեան փաստն եղող Ս. Ղազար եւ «Բազմավէպ» արդար հպարտանքի կոթողներ են, որոնց առջեւ յուզումով եւ ապագայի մաղթանքներով կը խոնարհինք:

Ա.

«ՅՈՒՍՈՒՆ» (Գահիրէ, 27 Հոկտ. 1947)

ՀՍՈՒՆԻՍՏԱՆԻ ՄԸ

Ինչպէս հաղորդած էինք, Հոկտ. 18ին, Շաբաթ, եւ Հոկտ. 19ին, Կիրակի օր, Վենետիկի մէջ տօնուած է «Բազմավէպ»ի հարիւրամեակը, երաժշտական, կրօնական եւ դրական հանդիսութիւններով, ի ներկայութեան մամուլի եւ մշակոյթի ներկայացուցիչներու, դանազան դաղութներէ:

Անշուշտ «Բազմավէպ» արժանի էր որ ողջունուէր բովանդակ դաղութահայութեան ինչպէս Հայաստանի մտաւորականութեան կողմէ, իբր հայ մտքի ու մշակոյթի անմահ կոթողներէն մէկը:

Հայ լրագրութեան նահապետն է «Բազմավէպ», որ աւելի քան դար մը անընդհատ գործած է եւ իր դրոշմը դրած հայ դրականութեան, լեզուին, եւ, առհասարակ, հայ մշակոյթին վրայ, մեծ վաստակով ու արդիւնաւորութեամբ:

Հարիւր տարին նշանակութիւն ունի մինչեւ իսկ ազգի մը կեանքին մէջ, մեծ ըլլայ թէ փոքր այդ ազգը: Բայց շատ աւելի կարեւորութիւն կ'առնէ ան, երբ նկատի կ'ուրենանք հայ կեանքը, փոթորկոտ, անապահով եւ արիւնոտ: Բայց հարիւր տարին մամուլի պատմութեան համար, արդէն իսկ անկորնչելի արժէք մըն է, հազուադիւս երեւոյթ մը, որ զիւրաւ չի կրկնուիր մինչեւ իսկ մեծ ժողովուրդներու իմացական կեանքին մէջ:

«Բազմավէպ»ը հարիւր տարուան ճիգ

թափած է հայ մշակոյթի անդաստանէն ներս, ժամացոյցի կանոնաւորութեամբ մեր ցիրուցան ժողովուրդին խօսելով հայոց պատմութեան, հայոց հին ու նոր գրականութեան, հայ բանասիրութեան եւ առհասարակ հայ կեանքի մասին, մութ էջ մը լուսաւորելով. հայ արժէքները պանծացնելով եւ հասցնելով հայութեան սրտին ու մտքին. հայ լեզուն պարզելով ու մաքրելով եւ վերջապէս նպաստելով հայ մտքի կազմակերպութեան, մտաւորականութեան փառանքներ ընծայելով հայութեան: «Բազմավէպ»ը կապուած է սերտօրէն Վենետիկի վանքին հետ, որ հոգեւոր հաստատութիւն մըն է եղած միայն, այլ կրթութեան ու դրականութեան, ընդհանրապէս հայ մշակոյթի վառարան մը, լուսարար ունենալով անուններ, որոնք պիտի մնան միշտ, որքան ալ փոխուին ժամանակները եւ արժէքի չափանիշերը: Ալիւշանէն մինչեւ Վարուժան, Հայր Արսէն Բագրատունիէն մինչեւ Հացունի ու Ղազիկեան, որոնք «Բազմավէպ»ի վաստակաւոր վարիճներն ու աշխատակիցներն եղած են, վանքէն ներս թէ դուրս, անուններ են, որոնք պիտի չըմոռցուին: Ալիւշանի հմայքը եւ շունչը վերուած պիտի մնան միշտ հայ քերթողութեան վրայ, որչափ ալ բանաստեղծ նոր դէմքեր ծաղկին, նոր արուեստով եւ յուզումներով. Բագրատունիի լեզուական նըւաճումները պիտի մնան միշտ իշխանական պերճութեամբ, որչափ ալ նորեր հասնին եւ մեր հին բարբառով փորձեն դրել կամ թարգմանել: Եւ այսպէս Հայր Հացունիներն ու Ղազիկեանները, քանի մը տասնեակներով բազմապատկուած, որոնք սիրով ու հաւատքով դործի փարած, իրենց կարելին կ'ընեն եւ կը մշակեն հայ մտքի դաշտերը, ծաղկուն ածուներ բանալով եւ պահելով:

«Բազմավէպ»ը միայն իր իրականացումներով չէ որ ուշագրաւ է եւ արժանի համազգային գնահատանքի ու երախտագի-

տութեան: Վաստակը անշուշտ մեծ ու կարեւոր բան մըն է, բայց աւելի մեծ ու կարեւոր բան մըն է վաստակը արժէտորդ, զայն կենդանի ու ազդու դարձնող տարրը, որ հաւատք կը կոչուի: Հարիւրամեայ յոբելեարի հին ու նոր դործիչները անշուշտ յարգանքի արժանի են իրենց դործովը, իրենց պատմական, լեզուական ու գրական աշխատանքներովն ու իրականացումներովը, բայց քանի մը անգամ աւելի արժանի են մեծարանքի՝ իրենց հաւատքովը, զոր ունեցած են եւ ունին հայ մշակոյթին եւ հայ ժողովուրդին հանդէպ, հայ հայրենիքին ու հայութեան ստեղծագործ թափին հանդէպ, ինչպէս անոնց վաղուան ճակատագրին հանդէպ:

Անոնք առաւելապէս անցեալը պրպտած են եւ կը շարունակեն պրպտել, բայց անցեալով ապագան կերտելու եւ լուսաւորելու հաւատքով: Հայոց պատմութիւնը կը խուզարկեն, բայց այն վստահութեամբ թէ մեր նոր պատմութիւնը պիտի առաջնորդուի անցեալի փորձերէն ու փորձառութիւններէն: մեր հին բարբառն ու բարբերը կը լուսաբանեն ու կը ստուգեն, բայց այն մըտադրութեամբ թէ մեր նոր լեզուն ու նոր կեանքը պիտի նպաստաւորուին ու ծաղկին, հայր աւելի հարուստ ու աւելի հարազատ պահելու համար:

Վերապահումներ կրնանք ունենալ վերնետիկի կատարած անցեալի վաստակին հանդէպ: կրնանք տարբեր չափանիշներով մօտենալ «Բազմավէպ»ի հին ու նոր իրականացումներուն հանդէպ, գրական, պատմական ու բանասիրական դրոշմներու տակ բաժնուած: Ժամանակները ինչպէս սերունդները իրենց անբռնադրաւելի իրաւունքներն ունին: Բայց ոչ ոք կրնայ ժխտել «Բազմավէպ»ի բացած աղօսին նշանակութիւնը եւ այն նուիրումը, որով տողորուած են իր աշխատակիցներն ու պատուական հայրերը, որոնք միշտ բան մը ունին ըսելիք հայ ժողովուրդին, հաւատքով ու հայրենասիրութեամբ:

Նահապետ իբր հանդէս, նահապետ՝ իբր ողի ու շունչ, «Բազմավէպ», վստահ ենք թէ պիտի շարունակէ իր գործը հայ կեանքին մէջ, դառնալով ոսկեղէն կապ՝ ցրուած դադութեամբ հայութեան միջեւ: Կղզիին մէջ մեկուսացած, հեռու աշխարհային հովիւրէն ու հայ կեանքի վէճերէն, ընդհանրական ծառայութեան ողիով, «Բազմավէպ» գիտցած է հայ մշակոյթը համազգային դարձնել եւ իր հաւատքն ու հիացումը հասցնել մեր ժողովուրդի բոլոր խաւերուն, մտաւորականութենէն մինչեւ խոնարհ դասերը, անխտիր: Միմիայն այս իրողութեան համար՝ հայ լրագրութեան Նահապետը արժանի է տօնախմբութեան բոլոր դադութիւններուն մէջ եւ բոլորին կողմէ:

Տարակոյս չկայ, որ մեծարանքը պիտի ըլլայ բոլորին կողմէ, բայց հարիւրամեայ ձեռնարկ մը մեծարանքով կարելի չէ պահել: Ժամանակները պզտոր են, մշակոյթի ձեռնարկները աւելի սուղ, քան օրուան կեանքը, դոհարերութեան ողին պակասած եւ հաւատքը չբացած: «Բազմավէպ»ի աշխատաւորները ունին այս ողին, ունին հաւատքի թափը, կարելի է ըսել կրօնականին հաւասար: Կը մնայ որ հայութիւնը միջոցը հայթայթէ այս «անձինք նուիրեալ» ներուն, որպէսզի շարունակեն իրենց գործը, մեղմէ հեռու, բայց մօտ մեր սրտին, կըղզիի մը մէջ, բայց հայ կեանքին խառնուած, մեր բոլորէն վեր՝ բայց մեր բոլորին համար: Օգտուինք առիթէն՝ կանգուն պահելու համար հայ մշակոյթի այս կոթողը, որ տեսակ մը նուիրական խորհրդանշան դարձած է հայ մշակոյթին համար: «Բազմավէպ»ը, արդարեւ, միայն հանդէս մը չէ, այլ մտքի վաստակաւորներու բեմ մը, որ հայ կեանքի վերելքին կը ծառայէ, խօսքով ու գործով:

Հայութիւնը կրնայ հպարտ ըլլալ իր հարիւրամեայ Նահապետով, որ վառ կը պահէ հայ մշակոյթի կանթը, հակառակ փչող հովիտներն ու ժամանակներու դաժանութեան:

Պիտի զլանա՞նք մեր կաթիլ զոհարերութիւնները, տեսական ու ապահով դարձնելու համար պատմական այս ձեռնարկը, որպէսզի աւելի եռանդով ու նուիրումով շարունակէ իր առաքելութիւնը:

ԻՄԲ.

«ԶԱՐԹՕՆԲ» (Շրճարար, քիւ 4 1947)

«Զարթօնք»ը պատիւ է համարում իրեն ողջոյնի խօսքը բերելու «Բազմավէպ»ի հարիւրամեակին եւ հպարտանալու այն մեծագոյն մշակութային աշխատանքով, որը կատարեց նա իր գոյութեան հարիւր տարւայ ընթացքում ու շարունակում է տարւայ ընթացքում ու շարունակում է կատարել: Ծանապարհ դուրս գալով պարզ ու տարրական գիտելիքներով եւ հասարակ լեզուով, նա իր հետագայ գործունէութեան ընթացքում լայն ուղիներ բաց արեց եւ աւելի խոր աղօսներ փորեց հայ մշակութային կեանքի հողադաշտի վրայ: ...

Վենետիկն էր, ինչպէս նաեւ Վիեննան, որ պաշտպանեցին մեր դասական մատենադրութիւնը, լեզուն եւ, ընդհանրապէս հայ գրութիւնը, առանց որի հայ ժողովուրդը մշակոյթը, առանց որի հայ ժողովուրդը պիտի կիսաճանապարհէին մնար: Հայ ուղեկորոյս մտաւորականութեան համար Ս. Ղազարի մենաստանը դարձաւ այն ջահը, Ղազարի մենաստանը մեր անցեալի սերունդը, առաջնորդութեամբ ենք մենք ու դեռ պիտի առաջնորդուենք մեր եկուորները: Միմիայն արդարեւ մեր հին, այո՛, որ իրենց անդու աշխատանքով, ճիշդ ու ջանքով կառուցեցին փրկել հայ ժողովուրդի ոսկեղանի մատենադրութեան գոհարները:

«Զարթօնք»ի շուրջը համախմբուած եւ քննադատող դրական դէմքերը թէեւ հնարաւորութիւն չունեցան անձամբ ներկայ գտնուելու այդ մեծ տօնակատարութիւններին, բայց երախտագիտութեան խորին զգացմունքներով իրենց սրտազին ողջոյն են յղում «Բազմավէպ»ին ու նրա անխոնջ մշակներին: Յուսանք, թէ պիտի գան այնպիսի օրեր, երբ բոլորս կենտրոնացած

մեր հայրենի հողի վրայ, առանց ուղեւորութեան դժուարութիւնների, պիտի աւելի չքեղ ու հանդիսաւոր պայմաններում տօնենք «Բազմավէպ»ի յաջորդ ամեակները:

Փա՛ռք հայ լեզուին ու նրա անմահ կերտողներին:

Փա՛ռք «Բազմավէպ»ին, նրա հիմնադիրներին ու անդու գործիչներին:

ՇԱՀ-ԴԱՐ

ԻՐԱՆԵԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

«ՆԵԴԱՅԷ ՀԱԳԻԳԱԹ» (Զայն ճշմարտոյնան)

Վենետիկի զեղեցիկ քաղաքին ծովալճակին մէջ կը գտնուի կղզեակ մը՝ Ս. Ղազար անունով: Աւելի քան երկու դար է որ այդ կղզեակը եղած է կեդրոն մը գիտական, պատմական ու գրական մեծ գործունէութեան: ... Հարիւր տարի առաջ այս եղբայրութիւնը մշակութային մեծ քայլ մը առաւ: Այդ՝ «Բազմավէպ»ի հրատարակութիւնն էր, գիտական, պատմական, գրական ամսագիր, որ հայ աշխարհին մէջ հռչակուեցաւ մեծահամբաւ:

Յուցադրուած ճաշակը եւ հմտութիւնը այդ գործին հրատարակութեան առիթ: Հանդէսը եւրոպական մեծագոյն, լաւագոյն ամսագիրներու դասին մէջ բարձրացուց: Հիմա, այդ հանդէսին հարիւրամեակն է: Բոլոր անոնք որ ծանօթ են տաղաքական գործին դժուարութիւններուն՝ անոնք միայն լիովին կրնան գնահատել հանդէս մը որ դարձ մը ի վեր կը շարունակուի: Այս հարիւրամեակէն կարելի է խորազգիւր հանդէսը վարդներուն, խմբագրողներուն աշխատասիրութիւնը, տոկունութիւնը, յարատեւութիւնը եւ արտասովոր նուիրումը: «Նեդայէ Հագիգաթ»ի խմբագրութիւնն, գիտակից տաղաքական գործին դաժանութեան, կը գնահատէ «Բազմավէպ»ի խմբագրութեան գործը, արժանի՝ երախտագիտութեան, ու կը շնորհաւորէ անոր հարիւրամեակը: